

կէսը վիճարանութեան մէջն է, բայց այսու ամե-
նային, միտքեալ կէսն էլ արհեստն ունակուր է,
որ նրանց արդիւնքով, եթէ այդ կարողանանքը
կանոնաւորվին ու նրանց մասին խնամք տարվի,
կարելի է առանց նեղութեան պահել շատ ծաղ-
կած դրութեան մէջ՝ Ղարաբաղի մեր այժմեան
թեմական դպրանոցը իր օրինորդաց դպրոցով ու-
րոնց նիւթական ոյժերը, չը նայելով հարուստ
վանդապատան կարողանանքի, շատ թոյլ են»։

ԱՐԳԻՆԱ գիւղից մեզ գրում են հետեւեալը։
«Մեզանում հողային վեճերը վերջ չունեն։ Հողը
ձեռք բերելու համար հայ գիւղացին ամեն հնա-
նուոր միջոցներ է գործ դնում։ Նոյն իսկ Եփրա-
կի շատ տեղերում 10—12 տարեկան երեխանե-
րին շատ անգամ միմեանց հետ պահում են, հող
սրպէս աղջկայ բաժինը, կամ ժառանգաւորայի սե-
փականութիւն ձեռք բերելու համար։ Ամենասու-
տիկ վեճերը և ընտանեկան երկպառակութիւննե-
րը հողերի պատճառով են լինում մեծ մասամբ։
Քանի մի օր սրանից առաջ թիքնիդ գիւղում հո-
ղի պատճառով մի կին իր օրինաւոր ամուսնուն
դուրս է արել տնից, ասելով որ գնաց գանգաւ-
որի, եթէ ուզում է իր հողի բաժինը ստանալ,
իսկ հակառակ դէպքում նրան տուն չի թողնի։
Բանը դրանում է, որ հողը կնոջն է պատկանում,
իսկ մարդը չունի իր բաժին հողը։ Հիմա խեղճ
մարդը, իր կնոջ ձեռքով տնից վռնուված, մարդ-
ված ման է գալիս, կինը նրան տուն չէ թող-
նում։ Գիւղացիք էլ խեղճ մարդուն հող չեն տա-
լիս, այնպէս որ սրա վերքը ինչ կը լինի, ինքն
էլ չը գիտէ»։

ԲԱԳՈՒԽՅ մեզ գրում են հետեւեալը։ «Ամսիս
4-ին կայացաւ մեր քաղաքում պ. Կարա-Մուրզա-
յի վերջին խմբագրական նստադասնադէսը (խորա-
կան կօնցէր)։ Այդ կօնցէրը հրաշալի էր, ուս-
տի արժանի էր հասարակութեան բոլոր ծախ-
հարութիւններին։ Պ. Կարա-Մուրզան ցոյց տուեց
իր հմտութիւնը և կարողացաւ իր խմբի անդամ-
ներին վարժեցնել կանոնաւոր երգեցողութեան, և
երաժշտական կատարելա գիտելիքնայի տակ
գրեց իր աշակերտներին։ Խմբի մէջ աչքի են ընկ-
նում, մասնաւորապէս պ. Կարա-Մուրզայի և Դաւիթ-
մանց, առաջինը քաղցր, արծաթաձայնի, ուրտուն
տէնորի հաղաւթաւ ձայն ունի, իսկ երկրորդը
զօրեղ և մետաղաձայն բարիտոնի ձայն ունի։
Հասարակութիւնը սիրով է վերաբերւում պ. Կա-
րա-Մուրզայի գործին, վերջապէս հասկանալով
որքան մեծ կրթողական նշանակութիւն ունի երի-
տասնորդութեան համար երաժշտական կանոնա-
ւոր դիտելիքնային և որքան մեծ գեղարուեստա-
կան վայելչութիւն է ունենալ իր մայրենի լե-
զուով երգող կանոնաւոր խօսական երգեցիկ
խումբը»։

«Новости» լրագիրը հաղորդում է, որ Բաթում-

թեան այդ պիտուեան արդարացի դպրոցի են
պատճառած մեծամասնութեան, որոնք ազգային
եկեղեցւոյ իրաւանց նախանձախնդիր են մնացած
ի մեծ տիրութիւն լատին կղերին։ Այդ բոլորը, մենք
կրկնում ենք, հետեւեալ է այն անխնայական
դրութեան, որի մէջ գտնուում են Կովկասի հայ-
կաթողիկոս հոգևոր գործերը, դեռ մինչև այս
վայրկեանին։ Վրացիստները դժուար թէ կարո-
ղանան հաշտ ապրել այնպիսիների հետ, որոնք
իրենց կաթողիկ կոչման վրա հայ անունն են
կրում, որից որ իրենք աշխատում են որքան կա-
րելի է իրենց հետո՝ և զգոյշ պահել։ Անցեալ-
ները, Բաթումի մէջ էլ, նորակաւոյց հայ-կաթո-
լիկաց եկեղեցւոյ շինութեան առթիւ վրացի-
կաթողիկէն և իր բաւական խոտովութիւններ յա-
րուցին։ աշխատեցան, որ եկեղեցւոյ անուան վը-
րայից հայ անունը վերցնեն և ստիկ կաթողիկ
յիշել տան, աշխատեցան և այլ նպատակներ ի-
րագործելու։ Օրովսկին գիտում է Բաթում, ուր
եթէ չենք օրնալում, ստորագրութիւն է հա-
ւաքում լատին եկեղեցւոյ գիրքը մանկ ցան-
կացողներին։ Սակայն, Գ. Զաքարեան եպիսկոպոս-
տի և տեղւոյն հայ-կաթողիկոս քահանայ տ. Մա-
նուէլ վարդապետ ճշմոտեանի շրջահայեցու-
թեան շնորհիւ դարձեալ անյաջող է մնում
Խնչո. համար արդեօք վրացախոսներն այդ-
քան ատելութեամբ են վերաբերւում դէպի հայ-
կաթողիկէնը և ցանկանում են մօտենալ լա-
տինականութեան, ընդհանրապէս։ Ընդհանրա-
պէս ենք ասում, վասն զի մենք պատահած
ենք այնպիսի վրացի-կաթողիկէններ, որոնք չեն
ուզում բոլորովին բաժանուել հայ-կաթողիկէ կե-

մի կէրօսինի գործարանին պատկանող Բագու-
նաւթի բոլոր աղբիւրները, որոնք գտնուում
են նաւթագործական ընկերութեան ձեռքում,
որի ներկայացուցիչն է պ. Պալաշկովսկի, այժմ
վերջնականապէս ծախվել են Ալֆօնս Բոտչիլի
վիճակին։ առևտրական տան վրա Բացի նաւթի
աղբիւրներից Բոտչիլի ֆիրման առել է Բաթում-
մի կէրօսինի գործարանն էլ, իր բոլոր պահեստ-
ներով։ Ուրեմն, ինչպէս մենք չափ անգամ գու-
շակել էինք, և այդ հարցին շատ անգամ նուիրել
ենք յօդուածներ մեր լրագրի մէջ, տեղական ար-
գիւստներով թիւնը առ փոքր անցնում է
օտար արդիւնաբերողների, օտար կապիտալիստ-
ների ձեռքը։ Մինչև այժմ մեր նաւթագործները
անկարող էին մրցել Նոբելի հետ, այժմ ինքն Նո-
բելն էլ անկարող կը լինի մրցել հրէայ հակա-
կապիտալիստի, Բոտչիլի հետ, որին Եւրօպայում
իրաւաբ Գերամի թագաւոր» են անուանում։

«Racism» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի առե-
տրական բանկի Բագուի բաժինը հեռագրով հրա-
ման է ստացել անսահման կրեդիտ բաց անել
Բագու եկած Ալֆօնս Բոտչիլի ներկայացուցիչ-
ներին։

Մայիսի 31-ին նշանակված է Թիֆլիսի դա-
տաստանական պալատի մէջ «Մշակ» լրագրի
խմբագիր Գրիգոր Արծրունու և նոյն լրագրի
թղթակիցների՝ Գալա Նիքոլայովի և Ասատուր
Շարիբեջովի գործը, որով նրանք մեղադրվում են
Թիֆլիսի պալատի պրօկուրորի առաջարկութեամբ
Ղարաբաղի նախկին անտառապետ պ. Ա. Ղար-
զանի գէմ 1879 թվական «Մշակ» մէջ յօդուած-
ներ հրատարակելու։ «Մշակ» խմբագրին պաշա-
պանելու է պալատում երդուեալ հաւատարմա-
տար Սենեքերիմ Արծրունի։

Մեզ գրում են, որ մի ամուլայ ընթացքում
Եփրակի գաւառում եղել են 5 մարդասպանու-
թեան դէպքեր։ Գողթութիւններ այս տարի չեն
պատահում, այլ ամենայնչին առիթով մարդիկ
միմեանց վիրաւորում ու սպանում են։

Ամսիս 7-ին, ինչպէս մեզ գրում են, Եփրակ
գաւառի փալարական գիւղում օր ընդերկով մի ուս-
նութիւն է պատահել։ Ալեքսանդրապոլի գաւառի
Մախմուդ-Ձուդ գիւղի բնակիչ մի 25 ամեայ հայ
երիտասարդ Յ. անունով, անցեալ տարի գալով
Փալարական գիւղը, տանուակերի մօտ լինում է մշակ
և սիրահարվում է նոյն գիւղի մի օրինորդի վրա։
Զուր ամիս որանից առաջ երիտասարդը փախ-
նում է օրինորդին և տանում է նրան Մանուկ-
Ձուդ գիւղը, որտեղ և պսակվում է նրա հետ։
Աղջկայ եղբայրը այդ դէպքից վիրաւորված, կա-
մենում է իր վրէժը լուծել և վճռում է, երբ
իր բոլոր փախցնողը (փեսան) գիւղը գալ, ան-
պատճառ սպանել նրան։ Ամսիս 7-ին երիտա-

ղեցուց և միանալ լատինաց։ Սակայն, այսօր
թէ վաղը, ուշ թէ կանուխ, ինչպէս երե-
ւում է, լինելիքը դա է։ Վրացի կաթողիկ-
ները լատինականութեան ճանապարհում մտած
են։ Մի և նոյն է թէ ճանապարհի վախճանին
կանուխ են հասել թէ ուշ։ Թէպէտ ի հարկէ
մենք այս պարզ ճշմարտութիւնը չենք կարողա-
նում պարզ արեամբ խոստովանել, սակայն իրա-
կանութիւնը թաքցնելը ոչքին ոչինչ օգուտ չի
բերել։ Միայն սա դարձեալ կը հաստատուի, որ
գործերի այս խառնակ դրութիւնից ազատելու
միակ էլքը, սեպական հայ-կաթողիկէ կախկալու
նշանակիչն է։ Այդ կարող է պատահել երկու ե-
ղանակաւ։ Կամ Կովկասի (ի բաց առեալ Բաթումի
և Կարսի նահանգներն) 22,000 հայ-կաթողիկէների
համար առանձին հայ-կաթողիկէ եպիսկոպոս օրո-
շել կամ էլ դոցա միացնել Արդուկի թիւին։

Որքան մենք յիշում ենք, այս վերջին միջոցը, սո-
րանից մի քանի տարի առաջ արդէն յաղկած է և
մինչև անգամ որոշումներ էր լինում նոր աթո-
ռատեղւոյ մասին թէ Թիֆլիսն էր աւելի յար-
մարը, Ալեքսանդր թէ դարձեալ Արդուկը, ուր
քաղաքի ստուար մեծամասնութիւնը (3/4) հայ-
կաթողիկէ է։ Սակայն, ահա 3 ասարի կայ որ
սրա հետեւանքները կը մնան դեռ ևս անյայտ։
Բայց վերջապէս յոյս ունենք թէ բարեկեան կա-
ռավարութիւնը ուշադրութեան կառնէ Կովկասի
հայ-կաթողիկոս հոգևոր վարչութեան անբաւարար
նացուցիչ դրութիւնը և կը բարեհաճի կարգադրել
ինչպէս որ հարկն է։

Առաքել Սարգսյանեանց

օճորդն իրաւ գալիս է փալարական գիւղը և այդ
մասին լուրն առնելով նրա կնոջ եղբայրը, անմի-
ջապէս վեր առնելով դաշտը գնում է երիտա-
սարդին որոնելու։ Փեսան այդ ժամանակ գիւղի
դրսում կանգնած, մի մարդու հետ խօսելիս է
լինում. ոճրագործը իր փեսային մօտենալով, ա-
ռանց մի խօսք անգամ արտասանելու, անմիջա-
պէս խրում է դաշտը ուղիղ երիտասարդի սրտի
մէջ, որ իսկոյն ուշաթափ ընկնում է։ Ապստամբի
խօսակցը ուզում է բռնել ոճրագործին, բայց
այս վերջինը դրան էլ է վիրաւորում դաշտնային
Այդ ժամանակ օգնութեան է հասնում վիրաւոր-
վածի կինը, բայց ոճրագործը սրան էլ վէրք է
հասցնում ու անմիջապէս փախում է։ Գիւղացիք
հաւաքվում են և հաղլո. հազ կարողանում են
բռնել յանցաւորին ու յանձնում են նրան իշխա-
նութիւններ։ Երիտասարդ Յ. արդէն մեռած է, իսկ
երկու վիրաւորված ամուսինների վէրքերը թէև
այնքան վտանգաւոր չեն, բայց կինը շատ վախե-
ցած է և հիւսնոյ է։ Մարդասպանը այժմ բան-
տարկված է։

Մայիսի 19-ին Սրբանշուհեան և Օրմանեան վար-
դապետները հասան Թիֆլիս, այստեղից էլ միա-
ձին ուղևորվելու նպատակով և վեր եկան Թիֆ-
լիսի հայոց առաջնորդարանում։ Մայիսի 18-ին
երկու վարդապետները Բաթում էին հասել։—Այդ-
տեղի հայոց հասարակութիւնը, ինչպէս մեզ գը-
րում են Բաթումից, մեծ համակրութեամբ ընդունեց
Օրմանեան և Սրբանշուհեան վարդապետներ-
ը։ Նոյն օրը Բաթումի հայերի խնդրեղով Օր-
մանեան քաղաք անց հայոց եկեղեցւում։ Եկեղե-
ցին լի էր ոչ միայն լուսաւորյալներ, բայց և կա-
թողիկ հայերով և օտարազգիներով։ Քաղաքը խոր
ուպաւորութիւն գործեց ունկնդիրների վրա։ Գե-
րապատիւ հայրը վերջացրեց իր քարոզը հետեւալ
խօսքերով. նա ասեց որ միայն միութեամբ և
հայրենասիրութեամբ մարդս կարող է արժանա-
նալ այս աշխարհում պատիւ և փառքի, իսկ հան-
դերձեալ աշխարհում յաւիտեական երանութեան
Չէ կարելի, աւելացնում է թղթակիցը, առհասա-
րակ չը գովել վեհափառ կաթողիկոսին, որ նա
այդ տեսակ արժանաւոր և ուսումնական անձանց
է ընտրել, ինչպէս Սրբանշուհեան և Օրմանեան,
եպիսկոպոսական կոչման արժանացնելու։

ԲԱԳՈՒԽՅ մեզ գրում են։ «Այս օրերս պ. Կա-
րա-Մուրզայի երգեցիկ խումբը վերջին անգամ
երգեց անդիս հայոց եկեղեցւոյ պատարագին։ Չէ
կարելի լուռութեան տալ այսպիսի մի երգով և չը
խորհուրդել պ. Կարա-Մուրզայի պէս մի մարդուն,
որ իր հմուտ և ժրջանաւ աշխատութեամբ յանձն
առաւ և գեղեցիկ կերպով կատարեց այնպիսի մի
դժուար գործը, ինչպէս մեր եկեղեցական երգե-
ցողութեան կանոնաւորը և խիստ երաժշտական
կանոնների տակ գրեւոր։ Յայտնի է թէ որքան
աննեղաշնայ է առհասարակ մեր եկեղեցական
երգեցողութիւնը, չը նայելով որ ահա 15 տարի
է որ մեր դպրանոցներում ու տանիքներում մտցը-
րած և մեր եկեղեցիներում երգողները այդքան ժա-
մանակ արդէն նոտաներով են երգում։ Բաց դար-
ձեալ մեր եկեղեցական երգեցողութիւնը մնում էր
նոյն անկանոն և աննեղաշնայ երգեցողութիւն։
Իսկ այժմ այդ երգեցողութիւնը, պ. Կարա-Մուր-
զայի ջանքերի և երաժշտական հմտութեան շնոր-
հով, մի այնպիսի փառաւոր ներդաշնակութիւն է
ստացել, որ մարդս զմայլում է ու զքանչաւում և
աղօթողը առանձին բաւականութեամբ մնում է
եկեղեցւում մինչև ժամերգութեան վերջը։ Ցանկա-
ւի կը լինէր, եթէ հարաւոր է, որ պ. Կարա-
Մուրզա, քացի Բագուից, այցելէ իր երգեցիկ
խմբով և Անդրկովկասեան այլ հայաբնակ տեղե-
րը, որպէս զի ուրիշ քաղաքների հայերն էլ ծա-
նոթանային այդ խմբի փառաւոր և կանոնաւոր-
ված հայկական երգեցողութեան ձևի հետ»։

Թիֆլիսի փողոցներում շատ անգամ կը հան-
դիպէք ազատ և անխնամ շրջելու թէ արական և
թէ իգական սեռի հոգեկան հիւսանքներին։ Այդ
հոգեկան հիւսանքներից, այսինքն խելագարներից
մէկը, պատու հայ կին, որին ժողովրդի մէջ ա-
նուանում են «Գիժ Լիզա» և որին, ինչպէս պատ-
մում են, վաղուց արդէն մարդը վռնուել է իր տը-
նից,—որ ցերեկով ամենակենսօրոնական փողոցնե-
րում կամ պար է դալիս և զուարճացնում է կինոս-
ներին, որոնք նրան շրջապատում են ու ծափ են
տալիս, կամ նոյն իսկ Գօրովիկոսի պրօսպեկտի
վրա ամեն հանդիպարին, լինի նա մարդ, կին, օ-
րինորդ, երեխայ կանգնեցնում է ու ամենամայա-
յի խօսքերով սկսում է հայհոյանքներ թափել
նրա գլխին։ Եւ այդ տեսակ թշուառներ, գժեր,

հոգեկան հիւսանքներ մի քանի հոգի կան, որոնք
մեր հասարակութիւնից անխնամ են թողված։

Մենք լսում ենք որ Էլմիաձեան ճեմարանի բո-
լոր վարժապետները արձակվելու են և Արշակ
Նահապետեանցին յանձնվում է վարժապետների
նոր խումբ կազմելը։

Լսում ենք որ Կովկասեան ուսումնարանական
շրջանի հոգաբարձու պ. Խանսովսկի ուղևորվեց
Թիֆլիսից դէպի Երևանի և Ղարսի նահանգները,
այդ նահանգների դպրոցներն այցելելու համար։

Մեզ գրում են Էլմիաձեանից որ Գեորգեան ճե-
մարանի հարցաքննութիւնները սկսված են։ Հա-
ցաքննվում են միայն վերջին լսարանի և դպրա-
նոցական վերջին դասատան աշակերտները։ Այս
տարի ճեմարանում աւարտողների թիւը հինգ
հոգի են միայն։

Հինգշաբթի օր, Համբարձման տօնի պատարա-
գին, վաղեք մայր-եկեղեցւում հայր Մաղաքիա
Օրմանեան մի քարոզ տուեց։ Վաղը, կիրակի օր,
վաղեք մայր-եկեղեցւում պատարագին հայր Օր-
մանեան կը տայ երկրորդ քարոզը։ Իսկ այսօր,
չարաթ օր երեկոյեան ժամասացութեանը նոյն
վաղեք եկեղեցւում քարոզ կը խօսէ հայր Գարե-
գին Սրբանշուհեան։ Սուրբ հայրերը կիրակի երե-
կոյեան ուղևորվելու են դէպի Էլմիաձեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱ

Եւրօպական քաղաքական կեանքին անմասնա-
կից Ալանիան դէժ այժմ յոյս է տածում, որ ա-
զատ կը մնայ այն ներքին խռովութիւններից,
որոնց ուստուտ էլ այդ երկրը երբ մեռաւ երի-
տասարդ Ալֆօնս XII-որդը առանց արու գաւակ
թողնելու, սպանիական զաւր ժառանգելու հա-
մար։ Այդ երկրի ծանր տպաւորութիւն թողեց
Սպանիայի վրա, որի նոյն իսկ այս դարի պատմու-
թիւնը հասցրել է այդ ազգին այն հաստատ համոզ-
մունքին թէ կանանց կառավարութիւնը ապաւազ-
դութիւն է երկրի համար։ Վաթօլիկ կղերի ծանր
ներգործութեան տակ սկսած այդ ազգի պատմու-
թեան վերջին ժամանակամիջոցը, երբ երկիրը խը-
ռովութիւնների ու աւազակութիւնների բռն էր
զարձեղ, երբ երկրի ներքին կեանքի մէջ տպահո-
ւութիւն և հանցաւորութիւն չը կար, երբ հոգեւո-
րականութիւնը և աստիճանաւոր-ազնուականու-
թիւնը թէ աղքատիքը և թէ կառավարութեան
գործերը մի նպատակ էին չինել իրանց անձնա-
կան դիտումների համար,—այդ բոլոր տխուր
զուգադիպութիւնները ազգին մի տխուր երազա-
ցութեան բերեցին, և դարմանալի չէ, որ Ալֆօն-
սի մահից յետոյ, երբ չը մնայ արու գաւակ, բա-
ցի մի աղջկանից և յոյ թագուհուց, տեղի ունե-
ցան մի քանի խլրտուաներ այն անձանց կողմից,
որոնք դիտումներ ունէին զայն վրա, և որոնք
մեծ յոյսեր գործեցին այրի թագուհու դէմ։

Խաղաղութեան և ներքին կեանքի կանոնաւոր
զարգացման բարեկամները տխուր աչքով էին նա-
յում այդ բոլորի վրա. նրանց ցանկութիւնները
խոնարհվում էին ազգի այն կարծիքի առաջ, որը
«թագաւոր» չունենալով ինքն իրան յաղկում էր
Այդ բոլոր նեղագրութիւնները և յուզմունքները
շատ էլ հեռու չը գնացին, որովհետեւ դեռ ևս մի
անորոշ կէտ կար,—թագուհին յոյ էր, և ազգը
սպասում էր, որ գուցէ նորածինը արու գաւակ
կը լինի, ուրեմն և չուտով Սպանիան կունենայ
իր թագաւորը։

Այդ դրութիւնը առանձնապէս ցաւալի էր
Սպանիայի համար։ Երկիրը վաղուց կորցրել էր
իր ներքին, ուրեմն և արտաքին ոյժը։ Այդ երկիրը
մի հզօր պատմական անցեալ է ունեցել, բայց վա-
ղուց է արդէն որ փայլուն անցեալն անցել է և
զրանից յետոյ սկսվեցաւ երկրի համար նոր շըր-
ջան, որի ընթացքում երկիրը ճնշվում էր և շա-
րունակում է այժմ էլ ճնշվել անոնական տազ-
նապի, ամբոյի տգիտութեան ու խաւարի, ներքին
խռովութիւնների և կուսակցութիւնների անկը-
ջանալի փոխադարձ երկպառակութեան տակ։
Երկրի ըստ երեւոյթին փառաւոր անցեալը ծնեց
Սպանիայի համար մի ամենանեղ անտեսական,
ստուար և բարոյական վիճակ, որի մէջ այդ եր-
կիրը մինչև այժմ էլ գտնվում է և այն փառա-
ւոր անցեալից մնացել միայն մաշայ յիշատակներ...
Եւ ահա այդ դրութիւնից յետոյ, չնորհիւ ժո-

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԽԱՐԿՈՎ ԳՆԱՑՈՂՆԵՐԻՆ

առաջարկուր ենք
ԲՈՒՅԻ առաջնա
կարգ Օտեկ (հիւ
րանոց)

Րիբնայա փողոցում: Նոմերները 75 կողմից մինչև 5 րոպե: Քաղաքի կառավարները անսխառնությամբ ամենուրեք վաղվա ճանապարհորդներին, որովհետև այստեղ «НА ЧАШ» չեն տալիս: Իսկ մեր հիւրանոցն ունի վաղվա մեծ քանակությամբ: Օտեկում կայ ՎԱՆՆԱ, կան ռուս և արաբական լՐԱԳԻՐՆԵՐ և ԲՈՒՅԻ: Առաջնակարգ ԲԵՍՏՐԱՆ: Խոհանոցը գտնվում է Բոսնիայի Էրմիտաժ Բեստրանի համար խոհարարի ձեռքում: Ձառը 60 կողմից մինչև 1 րոպե 50 կողմ: Նախաճաշիկ 30 կ., ընթրիք 40 կ.: Ցամաք օրից առելի մնացողներին անուրեք են գրվում: Գնեք ձեռնառու են:

Հասցեն ԲՈՒՅԻ, Րիբնայա փողոց ԽԱՐԿՈՎՈՒՄ:
Բեստրանի մէջ կայ «Օրկեստրիոն-Մոնտր»:

2—10 (հ. շ.)—(5)

Կարապետ Ստեփանեան Արզումանեանց և Մեսրոպ Բաղդասար Արզումանեանց, ցաւօք արտի յայտնելով առաջին հօր և երկրորդի հօրերը ՍՏԵՓԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑԻ մահը, որ պատահել է Սարմատում (Պարսկաստան) ներկայ ամսին 6-ին, ռուսի կիրակի օրը, ամսին 25-ին, լինելու է հոգեհանգիստ Մայրանի Ս. ԳԵՈՐԳԻՆԻ քանդակում: Խնդրում են հանգուցեալի ծանօթներին և յիշատակը յարգողներին ներկայ գտնուել հոգեհանգուստին նոյն օրը, ժամը 11-ին: 1—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ

Յանն է առնում թարգմանել ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից մատչելի գներով: Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

26—100

ԿՕՓԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(II. 4907)

12—50 (2)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Զորքը շարժի, մայիսի 28-ին, «ԱՆԱՏՈԼԻԱ» (ANATOLIE) շոգնուրը, նաև պետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրգու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին: Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունու գալլերէում, № 103.

4—4

ԼՈՒՍԻԳԵՂ

Ս. Հ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Առաջարկում է, իբրև ամենագործող միջոց՝ ճանձերի, լուսերի, բալլիսների, մըշխանների, ցեցի, տարականներ, (ուտիճի) և այլ միջոցների դէմ: Վաճառվում է պուրջով պարկերի մէջ և մաս մաս թղթեայ արկղիկներով, արժողութեամբ 5 կ., 10 կ. և 20 կ. իւրաքանչիւրը: Արկղիկներէր իւրաքանչիւրը փաթեթաված է առանձին թերթում, որ պարունակում է լուսերի գործածութեան հրահանգը:

Գլխաւոր դէպօ (պահեստ) Թիֆլիսում: ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԻՂԱՅԻՆ ԱՊՐԱՆԲՆԵՐԻ ԱՌԵՏՐԻ ՊԱՆԵՍՈՒՄ:
Վաճառվում է մաս մաս նոյնպէս ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆՑԻ ղեկավար և ԲՕՍՏՐԱՆԵՑԻ ղեկավար խանութի մէջ, նոյնպէս և այլ ղեկավարներում և խանութներում:

1—3

ԱՍԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ Վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱԿԱՆ առևտրական հաշուարարութիւնները առանց ռուսացի օգնութեանը ռուսմասիքներու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱԿԱՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է Կիւտ. գրավաճառանոցում, եղբայր ԳՈՎԻՆՑԻՆԵՐԻ բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисе, Лабораторная, № 11: Պարաբաղաւորը գտնուում են վերջին հասցեով Շ. Ս. Մանուէլյանց:

Գինն է ամեն տեղ 2 րոպե:

20—30

Съ 10-го числа настоящаго мѣсяца начался приемъ объявленій для напечатанія въ „БАТУМСКОМЪ ЛИСТѢ ОБЪЯВЛЕНІЙ“, предназначае-момъ для БЕЗПЛАТНОЙ разсылки, въ числѣ до 5,000 экземпляровъ, во мно-гіе мѣста Россіи и за границу. Плата за объявленія въ „ЛИСТѢ“: до трехъ разъ—по 7 коп. за мѣсто, занимаемое строкою обыкновеннаго шрифта, отъ трехъ до ДЕСЯТИ разъ—за скидкою 15%. СВЕРХЪ ДЕСЯТИ разъ—по соглашенію, но не менѣе 4 коп. за строку, или занимаемое ею мѣсто. Об-ращаться въ БАТУМЪ, къ ПЕТРУ АЛЕКСАНДРОВИЧУ ЛОБКО.

П. А. ЛОБКО 3—3

ՎԻԵՆՆԱ

Ա. Զ. Գ.

ԱՌՍՏՐԻԱ

ԳՐԵԹԷ ՈՉՆՁՈՎ

Կարելի է առնել սեղանի գեղեցիկ ԱՆՈՒՆԵՐ, 42 կտոր, միայն 18 ֆրանկ 75 սանտ: Առևտրի դադարման պատճառով, ծախու հանված են ՀԱՅԵՆԵԱՆ արծաթէ պատրաստված անօթներու ահագին քանակութիւններ, սովորական գնէն 25 առ 100 դեղձով: Արտադրութիւն են Հայֆէնեան արծաթեղէններ պատրաստող Միացեալ Ընկե-րութեանց, որք անակցած են այժմ:

Միայն 18 ֆրանկով և 75 սանտով ստանալի, ինչ որ յառաջագոյն 60 ֆրանկով կը ստացվէր: Կը գրկեմք Հայֆէնեան արծաթէ պատրաստեալ սեղանի հետեւեալ անօթ-ներն, որք արտաքոյ կարգի ընտիր և դիմացուին են:

6	Հատ սեղանի գեղեցիկ դանակներ	Հայֆէնեան արծաթէ
6	պատառաքաղներ	" "
6	սպուրի մեծ գդալներ	" "
6	սուրճի սիրուն գդալներ	" "
1	սպուրի խոշոր և ծանր գդալ	" "
1	կաթի մեծ գդալ, շատ նուրբ	" "
3	հաւկիթի գեղեցիկ և թանձր անօթներ	" "
2	սկաւառակներ թէյամանի համար	" "
1	թէյի գեղեցիկ թորիչ	" "
1	գեղեցիկ պղպեղաման, կամ շաքարաման	" "
3	շաքարի շքեղ թասեր	" "
6	գեղեցիկ դանակակալներ	Բիւրեղէ

Սպիտակութիւն երաշխաւորեալ 10 տարի:

Ընդունելու համար այս 42 անօթներն ֆրանկ 40 և ուղղակի բնակարանը, 4 կամ 5 օրվայ մէջ, հարկ է ուղարկել 18 ֆրանկ 75 սանտով ընդհանուր միջոցները Հայ-ֆէնեան արծաթեղէններու Միացեալ գործարանաց, այս հասցեով

M. RUNDBAKIN 2 B. Hedwiggasse
VIENNE (Autriche)

ՄԱՆՈՒԹԻՒՆ. Գրամը կը հատուցվի, երբ վաճառքներն չը յարմարին: Հայերէն լեզուաւ նամակներ կընդունվին: 6—18 (5)

ԲՈՒՅԻՆԻՐԵԱՄԻ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱԲԱՂԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Меланж. Մագերի արագ և առատ բուսաց-նելու համար և նրանց պահպանե-լու թափվելուց: Գի-նը 2 ր. սրտակի համար, գործածու-թեան հրահանգի հետ միասին, ու-սերէն, ֆրանսերէն և գերմաներէն լե-զուով:



Բաղադր. — Eu- genie. Գալինեա և պոսկի փունջի ծաղիկներից, և-րեւին, շիմբին և ձեռքերին քնք-շուկիւն և փափ-կութիւն, նոյն-պէս և մարմարի-ծիւ սպիտակու-թիւն տալու հա-մար, շուշանի և վարդի անուշա-

հոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը սնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրտա-կի համար, գործածութեան հրահանգով ուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմաղուք — Eugenie. Կեղծի, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ արվում երեսի քրտնից: Առաջարկ-վում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրտակի համար, գործա-ծութեան հրահանգով ուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոսմէտիկան արդիւնները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պա-ռնակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրլին Ռիս.

ԱՐՏՈՒՆԻԹԻՆ ՍՏԱՅԱԾ ՊՕՄԱԿ

Իսկական «Pasta Eugenie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատ ա հող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրտակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պոմադ պերուական բաղաւոր, մաղերը սնչացնելու, խտացնելու և մե-ծացնելու համար: Գ. 2 ր. սրտակի համար:

Ձեռքերի պոմադ: Գինը սրտակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրտակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «Երեւոյթ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, միջինով 1 ր. 50 կ., առանց միջինի 1 ր. 20 կ.

Մագերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիւ-րաւորման» գործարանի:

Գլխաւոր պահեստ Թիֆլիսում Վ. Գ. Ի. Վ. Ն. և Կի ղեկավար և պարանքների մագաղի-նում, Վ. Օնգուս: Նիւրնբերգի տակ, Զուլաւովի տանը: 38—100

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱՃՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Հինգշաբթի 29-ին մայիսի ԲԱՌՈՒՄԻՅ զուրս կը գնայ CAMBODGE (ԿԱՄԲՈՋ) շոգնուրը, նաև պետ CAMOIN (ԿԱՄՈՒՆԵՆ), մանկով Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակ-ցիկով Եաֆա, Պորտ-Սէյըր և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգնուրին հետ:

Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ԲԱՌՈՒՄ և ԲԱՌՈՒՄ Կ. Կ. ԷԼԼԷՐՍ ԲՈՒՐ-ԿԷԱՐԻՆ և ԸՆԿ. Իսկ Թիֆլիսում ԳԷՈՐԳ ՀԵՅՈՒՐԵԱՆ ՀԵՅՈՒՐԵԱՆՑԻՆ: 1—3

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:

1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григо- рія Арзруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.

2) Die Oekonomische lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 kop.

3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисе, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

5—25